ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ և ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ժ.01.06 – «ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երիցյան Սերգո Սարգսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ալավերդյան Դավիթ Հրայրի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022թ. հուլիսի 6-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակի ընթացքում գիտական գրականության մեջ շեշտադրվում է լրագրողական գործունեության նոր ձևերի ի հայտ գալը՝ կապված համացանցի (տեղեկատվության տարածման հարթակի) օգտագործման հետ: Ժամանակակից լրագրությանը բնորոշ համացանցայնացման և կոնվերգենցիայի գործընթացները նպաստել են լրագրողական գործունեության նոր իրողության՝ մուլտիմեդիային ժուռնալիստիկայի կայացմանը: Սույն ատենախոսությունը, որը նվիրված է կոնվերգենտ լրագրության ու մուլտիմեդիային հարթակների (ՌԴ և ՀՀ ԶԼՄ-ների օրինակով) զարգացման միտումների ու հեռանկարների հիմնահարցերի լուսաբանմանը, հանդիսանում է հայաստանյան իրականության մեջ առաջին գիտական փորձերից մեկը՝ նպատակաուղղված վերոհիշյալ ոլորտի համալիր ուսումնասիրությանը: Հատկանշական է, որ մուլտիմեդիային լրագրության կայացման տեսական հիմնահարցերը բավարար չեն ուսումնասիրված նաև ռուսաստանյան և արևմտյան իրականության մեջ, և սույն արձանագրումը նույնպես վկայում է ներկայացվող ատենախոսության արդիականության մասին:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է մուլտիմեդիային լրագրության իրողության համալիր ուսումնասիրությունը, ժամանակակից լրագրության միտումների լուսաբանումը, մուլտիմեդիային հարթակների յուրահատուկ հնարավորությունների բացահայտումը՝ լրագրողական արտադրանքի տարածման, հայաստանյան ԶԼՄ-ների հետագա զարգացման ու նրանց մրցունակության բարձրացման նպատակով: Ուսումնասիրության **հիմնախնդիրներն են**.

1. Սահմանազատել (լրագրողական դաշտի վերափոխումների իրողությունները անվանելու համար հաճախ իբրև հոմանիշ օգտագործվող) «համացանցային լրագրություն», «թվային լրագրություն», «առցանց լրագրություն», «կոնվերգենտ լրագրություն» և «մուլտիմեդիային լրագրություն» հասկացությունները՝ եզրաբանական ու մեթոդաբանական խառնաշփոթից խուսափելու նպատակով:

2. Բացահայտել «կոնվերգենտ» և «մուլտիմեդիային» լրագրության պատմական նախատիպերը (մասնավորապես՝ հայաստանյան ու ռուսաստանյան իրողությունները հետազոտելով):

3. Նշել լրագրության գործառութային վերաձևումները և փոփոխությունները լրագրողի պրակտիկ գործունեության մեջ՝ պայմանավորված տեղեկատվական դաշտի կոնվերգենցիայի, մուլտեմեդիականացման ու համացանցայնացման գործընթացներով:

4. Բացահայտել ժանր և ձևաչափ հասկացությունների փոխկապակցվածությունը՝ լրագրողական ստեղծագործության նոր ֆենոմենների (լոնգրիդ, բլոգ, հատուկ նախագիծ և այլն) համատեքստում, որոնք սույն հիմնահարցերի հետազոտողների կողմից դասակարգվում են երկակի (որպես ժանր կամ ձևաչափ):

5. Դիտարկել ու ներկայացնել հայաստանյան և ռուսաստանյան ՁԼՄ-ների տարածվածությունը և ներգրավվածությունը համացանցում (ինչպես կայքերի առկայությունը, այնպես էլ սոցիալական ցանցերում, սթրիմինգային ծառայություններում ու մեսենջերներում ներկայացված լինելը):

6. Բացահայտել հետխորհրդային տարածքում սուր բանավեճեր հարուցող թեմաների լուսաբանման համար մուլտիմեդիային տարածքի և կոնվերգենտ լրագրության գործիքակազմի օգտագործման հնարավոր միտումները:

7. Ներկայացնել մուլտիմեդիային տարածքում հայ և ռուսաստանյան հրապարակախոսության (նրա՝ աշխարհայացքի և հասարակական գիտակցության օրակարգերի ձևավորման գործընթացում պատմական դերը հաշվի առնելով) ավանդույթների օգտագործման հնարավորությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: «Համացանցային լրագրություն», «թվային լրագրություն», «առցանց լրագրություն», «կոնվերգենտ լրագրություն» և «մուլտիմեդիային լրագրություն» հասկացությունների սահմանման գործընթացում օգտագործվել է համեմատական վերլուծության մեթոդը: Համացանցում ՁԼՄ-ների ներկայացվածության ցուցիչների և նրանց ազդեցության գործոնի փոխկապակցվածության բացահայտման գործընթացում օգտագործվել են քանակական վերլուծության և ընդհանրացման մեթոդներ: Աշխատանքում օգտագործվել են նաև դիտարկման էմպիրիկ մեթոդներ (ՁԼՄ-ների մշտադիտարկում), բովանդակային վերլուծությունը, հարցազրույցների պրակտիկ մեթոդը:

Հետազոտության **օբյեկտ** են հանդիսացել մուլտիմեդիային և կոնվերգենտ լրագրության իրողությունները, իսկ **առարկա**՝ հայաստանյան ու ռուսաստանյան լրատվական դաշտի մուլտիմեդիականացման միտումները:

Խնդրի տեսական մշակվածությունը: Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումների ուսումնասիրությունը արտացոլվում է տարբեր գիտաճյուղերի հատման տիրույթի հրապարակումների լայն շրջանակում (մենագրություններ, գիտական և հանրագիտարանային հոդվածներ, բուհական դասագրքեր, ռուսաստանյան և հայաստանյան ԶԼՄ-ների մշտադիտարկման արդյունքներ): Թեմայի համար սկզբունքային հասկացությունները սահմանվել և ճշգրտվել են ինչպես մեջբերումների «ընդհանուր տեղի» դարձած արևմտյան[1], այնպես էլ վերջին տարիներին հրատարակված ռուսաստանյան[2] մենագրություններում և ուսումնամեթոդական հրապարակումներում: Վերջին տարիների հրապարակումներում[3] տեղ գտած տեսակետների և ծավալված քննարկումների վերլուծությունը հնարավորություն է տվել հնարավորինս համակողմանի ներկայացնել ու մեկնաբանել առկա՝ մուլտիմեդիային դաշտի եզրաբանությունը: Հետխորհրդային լրագրության գործառութային ձևափոխումները առավելապես ներկայացված են լրագրության տեսությանը նվիրված ռուսաստանյան հեղինակների աշխատություններում (հատկանշական է, որ համապատասխան մենագրությունները առավելապես լուսաբանում են «ավանդական» լրագրության հիմնահարցեր, իսկ

---

[1] Մասնավորապես տե՛ս Маклюэн Г. М., Понимание медиа: Внешние расширения человека, М,: Жуковский: КАНОН-пресс-Ц; Кучково поле, 2003, Vaughan T. Multimedia: Making It Work. 8th ed. McGrawHill, 2010:

[2] Մասնավորապես տե՛ս Журналистика и конвергенция: почему и как традиционные СМИ превращаются в мультимедийные / под ред. А.Г. Качкаевой. – М.:, 2010, Уланова М. А., Интернет журналистика, Москва, Аспект-Пресс, 2014, Мультимедийная журналистика: учебник для вузов / под общ. ред. А. Г. Качкаевой, С. А. Шомовой; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». — М.: Изд. дом Высшей школы экономики, 2017:

[3] Մասնավորապես տե՛ս Вартанова Е.Л. К чему ведет конвергенция СМИ? // Информационное общество. 1999. Вып. 5., стр. 11-14, Зиновьев И. В., Возможности мультимедийной журналистики на современном этапе развития российских масс-медиа // Знак: проблемное поле медиаобразования, Издательство Челябинского государственного университета, 1(9), 2012, стр. 82-85, Кульчицкая, Д. Ю. Мультимедиа как коммуникационный феномен: анализ зарубежных исследований // Вестник Московского университета. Серия 10. Журналистика, 2018, № 6, стр. 94-112, Dahlgren P. Media logic in cyberspace: Repositioning journalism and its publics // Javnost — The Public. Journal of the European Institute for Communication and Culture. 1996. No. 3 (3), pp. 59-72, Deuze M. What is Multimedia Journalism? // Journalism Studies. 2004. Vol. 5. No. 2., pp. 139-152, Deuze M., What Is Journalism? Professional Identity and Ideology of Journalists Reconsidered // Journalism, Copyright © 2005 SAGE Publications (London, Thousand Oaks, CA and New Delhi), Vol. 6(4), pp. 442-464:

մուլտիմեդիային ու կոնվերգենտ լրագրության արդի միտումները բացահայտվում են հոդվածներում[4]: Հետխորհրդային լրագրության ժանրային ու ձևաչափային լուծումների դասակարգման գործընթացում կարևորվում են ԱՊՀ երկրների հետազոտողների գիտական ու մեթոդական հրապարակումները, որոնք թույլ են տալիս պատկերացում ձևավորել «ավանդական» ժանրերի և ուսումնասիրվող ոլորտի զարգացման արդի միտումների և առանձնահատկությունների մասին[5]:

---

[4] Մասնավորապես տե՛ս Савинова О. Н., К вопросу о трансформации функций журналистики // Теория СМИ и массовой коммуникации, выпуск 4, 2010, http://www.mediascope.ru/node/660, Мирошниченко А., Форматы подачи и упаковки контента в условиях медиаконвергенции // Медиаконвергенция, которая изменила мир? / под ред. М.С. Корнева. М.: РГГУ, 2014:

[5] Մասնավորապես տե՛ս Երիցյան Ս. Ս., Հեռուստահաղորդում. Մտահղացումից մինչև եթեր (Հեռուստալրագրության տեսության և պրակտիկայի հարցեր), Երևան, Էդիթ Պրինտ, 2007, Тертычный А. А., Жанры периодической печати: учеб. пособие, Москва, Аспект Пресс, 2000, Смирнов В. В., Жанры радиожурналистики, учебное пособие для вузов, Аспект пресс, Москва, 2002, Третьяков В.Т., Как стать знаменитым журналистом: Курс лекций по теории и практике современной русской журналистики, Москва, 2004, , Кройчик Л. Е., Система журналистских жанров // Основы творческой деятельности журналиста: Учебник для студентов вузов по специальности «Журналистика» / Ред.-сост. С. Г. Корконосенко, Спб., 2000, стр. 125-167, Лазутина Г. В., Жанр и формат в терминологии современной журналистики // Вестн. МГУ. Серия 10. Журналистика. - 2010. - №6, стр. 14-21, Саенкова-Мельницкая, Л. П. Понятия «жанр», «система жанров» в журналистике и кинокритике: предметные характеристики и факторы жанрообразования // Весн. Беларуск. дзярж. ун-та. Серыя 4, Філалогія. Журналістыка. Педагогіка. – 2014. – № 2., стр. 82-85, Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 28-39, Иванова Л. В., Жанры и форматы мультимедийной журналистики как учебная дисциплина и методическая проблема // https://cyberleninka.ru/article/n/zhanry-i-formaty-multimediynoy-zhurnalistiki-kak-uchebnaya-distsiplina-i-metodicheskaya-problema/viewer, А. Бурдина, Что такое мультимедийная журналистика: понятие, типология, особенности https://its-journalist.ru/articles/chto-takoe-multimedijnaya-zhurnalistika-ponyatie-tipologiya-osobennosti.html#i-2, Саянова Н. В., Публицистика в эпоху конвергентных СМИ // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 42-45, Королев И. А., Научная полемика об определении места колонки в современной системе жанров // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 317-321, Градюшко А., Современные мультимедийные форматы аналитических жанров журналистики, https://elib.bsu.by/bitstream/123456789/148484/1/Hradziushka_Streltsov.PDF:

Հիշարժան են լոնգրիդի և բլոգոսֆերայի ուսումնասիրությանը նվիրված Ա. Վ. Կոլիսնիչենկոյի[6], Ա. Ա. Շինկարյուկի[7], Մ. Ն. Բուլաևայի[8], Լ. Վ. Էկգարդտի[9], Օ. Գ. Ֆիլատովայի[10], Ռ. Ի. Մելեշևիչի[11], Վ. Դ. Սավենկովի[12] գիտական հրապարակումները: Մուլտիմեդիային լրագրության կայացման գործընթացում համապատասխան հարթակների օգտագործման համատեքստում հարկ է առանձնացնել ժամանակակից լրագրության մեջ մեսենջերների դերը կարևորող Ա. Գրադյուշկոյի[13], Ի. Եպիշկինի[14], Դ. Կոնոպլևի[15] հրապարակումները:

Ուշագրավ են նաև հայաստանյան լրագրության փորձը լուսաբանող, միջառարկայական հետազոտությունների տեսանկյունից կարևորվող,

---

[6] Колисниченко А. В., Длинные тексты (лонгриды) в современной российской прессе // Электронный научный журнал "Медиаскоп", 2015, Выпуск 1, режим доступа: http://www.mediascope.ru/1691 (дата обращения: 07.11.2021)

[7] Шинкарюк А. А., Жанровая составляющая основных мультимедийных форматов (лонгрид, артдок) // Журналистский ежегодник, н. 6, изд. Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего профессионального образования «Национальный исследовательский Томский государственный университет», 2017, https://cyberleninka.ru/article/n/zhanrovaya-sostavlyayuschaya-osnovnyh-multimediynyh-formatov-longrid-artdok/viewer (дата обращения: 19.02.2022)

[8] Булаева М. Н., Мультимедийный лонгрид как новый журналистский формат // Журналистский ежегодник, н. 4, изд. Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего профессионального образования «Национальный исследовательский Томский государственный университет», 2015, https://cyberleninka.ru/article/n/multimediynyy-longrid-kak-novyy-zhurnalistskiy-format/viewer

[9] Экгардт Л. В., Блоггерство – гражданская журналистика или слухи? // Вестник ВГУ, Серия: Филология, Журналистика, 2010, №2, стр. 220-223:

[10] Филатова О. Г., Блоги и СМИ, гражданская и традиционная журналистика: соотношение понятий // Вестник СПбГУ, Сер. 9, 2010, Вып. 4, стр. 281-287:

[11] Мелешевич Р. И., Работа современного блогера: самопрезентация и консьюмеризм // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 147-153:

[12] Савенков В. Д., Функции блогосферы в РФ и США в XXI веке: сходства и различия // Социодинамика, 2018, 3, 2018, стр. 16-26:

[13] Градюшко А., Мессенджеры в структуре творческой деятельности журналистов // Мультимедийная журналистика: сб. науч. трудов / под общ. ред. канд. филол. наук доцента В. П. Воробьева, Минск, БГУ, 2018, стр. 8-14:

[14] Епишкин И. И., Telegram-каналы: причины запуска проектов и инструменты продвижения // МедиаАльманах. 2017, № 3, стр. 30–41:

[15] Коноплев Д. Э., Telegram как новая среда коммуникации в СМИ и соцсетях // Знак: проблемное поле медиаобразования, 2017, № 3 (25), стр. 198–200:

«գիտության ու կրթության ոլորտի լրագրության» միջազգայի փորձն արտացոլող հրապարակումները[16]:

Ատենախոսության գիտական նորույթը: Ներկայացվող ատենախոսությունը մուլտիմեդիային ու կոնվերգենտ լրագրության տարբեր հիմնահարցերի, հայրենական մուլտիմեդիային հարթակների կայացման ու զարգացման հեռանկարների, ՁԼՄ-ների մրցունակության բարձրացման գործընթացում նրանց դերի հնարավորինս համապարփակ դիտարկման, հայկական մշակութային արժեքների, մասնավորապես հրապարակախոսական մտքի նմուշների՝ նաև մուլտիմեդիային գործիքակազմով տարածման հնարավորության ուսումնասիրության առաջին փորձերից է հայաստանյան իրականության մեջ: Հաշվի առնելով ռուսաստանյան և հայաստանյան ՁԼՄ-ների պատմական փոխկապակցվածությունը և զարգացման արդի պայմանները՝ ատենախոսությունում զուգահեռաբար դիտարկվում ու վերլուծվում են ՌԴ և ՀՀ մուլտիմեդիային ու կոնվերգենտ լրագրության կայացման փորձը ընդհանրացնող օրինակներ (հատկանշական է, որ սփյուռքահայ ՁԼՄ-ները օրգանապես շաղկապված են համապատասխան գաղթօջախների երկրների մշակութային ավանդույթներին, կրում են համապատասխան պետությունների (ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իրանի, Լիբանանի, Սիրիայի) իրավակարգավորումների և ընդհանուր լրատվական դաշտի ազդեցությունը, ինչը հաճախ անդրադառնում է թե՛ հրապարակումների քաղաքական

[16] Մասնավորապես տե՛ս Պետրոսյան Դ., Անհատի ինքնության նոր որակները վիրտուալ իրականության մեջ («Ֆեյսբուքի» հայ օգտատերերի օրինակով) // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2022 № 1 (37), էջ 76-82, Հովսեփյան Մ.Մ., Ալավերդյան Դ.Հ., Սևանա լճի էկոհամակարգի հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկությունները ՀՀ ՁԼՄ-ներում // Բնապահպանական խնդիրների ժուռնալիստիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ, Երևան, 2015 թ., էջ 31-38, Հովսեփյան Մ.Մ., Ռադիոն գլոբալացման դարաշրջանում // Вестник Российско-Армянского университета: гуманитарные и общественные науки, н.2, РАУ, Ереван, 2017, էջ 194-200, Петросян Д.В., Метаморфозы современной армянской прессы // Вопросы теории и практики журналистики, 2017, Т. 6, No 1, стр. 41–48, Делез Ж., Кино, Москва, Ад Маргинем Пресс, 2016, Коханова Л.А., Штепа В. И., Отражение науки и образования России в современных средствах массовой информации // Международный журнал прикладных и фундаментальных исследований, 2010, н. 12, стр. 86-89, Абрамоских Т. А., Освещение вопросов образования в печатных СМИ как фактор позитивного воздействия на процесс реформирования современной школы: теория и реальность // Вестник Волжского университета имени В. Н. Татищева н.2, том 1, 2017, https://cyberleninka.ru/article/n/osveschenie-voprosov-obrazovaniya-v-pechatnyh-smi-kak-faktor-pozitivnogo-vozdeystviya-na-protsess-reformirovaniya-sovremennoy-shkoly/viewer

հրամայականների, թե՛ ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով լրագրողական նյութի տարածման մասսայականության և այլ առանձնահատկությունների վրա): Ատենախոսության շարադրման ընթացքում իրականացվել է հայաստանյան ՁԼՄ-ների՝ համացանցում ներգրավվածության ցուցանիշների էմպիրիկ-համեմատական ուսումնասիրություն: Աշխատանքի **տեսական նորույթը** պայմանավորված է նաև մուլտիմեդիային և կոնվերգենտ լրագրության հասկացությունների համալիրի տեսական վերաիմաստավորման ու ճշգրտման փորձերով, վերոհիշյալ հիմնահարցերի ուսումնասիրության՝ միջառարկայական մոտեցմամբ: Առաջին անգամ դիտարկվում են կոնվերգենցիայի (մասնավորապես՝ հոգևոր մշակույթի յուրահատուկ ձևերի՝ փիլիսոփայության և արվեստի կոնվերգենցիայի) որոշ դրսևորումներ հումանիտար գիտություններում, ԵԱՏՄ և ԱՊՀ երկրների կրթական համակարգերի առջև ծառացած խնդիրներ, ազգային ինքնության ու բնապահպանության տարաբնույթ հիմնահարցեր՝ մուլտիմեդիային տարածքում դրանց լուսաբանման հնարավոր ուղիների բացահայտմամբ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատանքը ունի կիրառական նշանակություն, նպատակաուղղված է հայաստանյան ու ռուսաստանյան ՁԼՄ-ների գործունեության գնահատման կոնկրետ առաջարկների մշակմանը, դրանց մրցունակության (ազդեցության գործոնի) բարձրացմանը, «Լրագրություն» մասնագիտացմամբ հայաստանյան և ռուսաստանյան բուհերի մագիստրատուրայի և բակալավրիատի ծրագրեր (հատուկ կուրսեր՝ «Մուլտիմեդիային և կոնվերգենտ լրագրությունը Հայաստանում», «Ժանրաձևաչափային լուծումները մուլտիմեդիային լրագրությունում», «Մուլտիմեդիային լրագրության կառավարման հիմնահարցերը Հայաստանում», «Հրապարակախոսության ավանդույթների օգտագործումը մուլտիմեդիային լրագրության մեջ») կազմելուն և համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներ ստեղծելուն: Ատենախոսության եզրակացությունները կարող են նպաստել ՁԼՄ-ներում արդի սոցիոմշակութային հիմնահարցերի՝ կոնվերգենտ և մուլտիմեդիային լրագրության գործիքակազմի օգտագործմամբ լուսաբանելուն:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները ներկայացվել են գիտաժողովներում ու սեմինարներում, ատենախոսի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վեց ենթագլխից, եզրակացություններից և

առաջարկություններից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին գլխի առաջին ենթագլխում (Մուլտիմեդիային լրագրության կայացումը, զարգացումը և առանձնահատկությունները) քննության են ենթարկվում ՌԴ և ՀՀ մուլտմեդիային լրագրության ձևավորման փուլերը և պատմանակ նախատիպերը: Փորձ է արվել սահմանազատել այն հասկացությունները («համացանցային լրագրություն», «թվային լրագրություն», «առցանց լրագրություն», «կոնվերգենտ լրագրություն» և «մուլտիմեդիային լրագրություն»), որոնք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ՝ լրագրողական գործունեության տրանսֆորմացիոն ֆենոմենների սահմանման համար: Հումանիտար գիտություններում կոնվերգենցիայի հիմնահարցերի առավել համակողմանի քննության նպատակով բերվել են օրինակներ նաև փիլիսոփայության և արվեստի (մասնավորապես՝ գեղարվեստական գրականության և կինոարվեստի) փոխկապակցվածության դրսևորումների պատմությունից:

Երկրորդ ենթագլխում (Մուլտիմեդիային ԶԼՄ-ների գործառութային փոխակերպումները) դիտարկվում են ինչպես լրագրության (իբրև բազմաշերտ ոլորտի) գործառուաթային փոխակերպումները, այնպես էլ փոփոխությունները լրագրողի պրակտիկ գործունեության մեջ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ և ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ ՈՒ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում (Ժանրաձևաչափային մոտեցումները մուլտիմեդիային լրագրության մեջ) ներկայացված է ավանդական լրագրության նյութերի ժանրային դասակարգման որոշ (գերակայող) մոտեցումների համառոտ տեսությունը՝ մուլտիմեդիային իրողության տիպաբանության հետագա քննության նպատակով (դիտարկվել են ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակները): Քննության են առնվել մուլտիմեդիային լրագրության տարբեր ձևաչափեր (մասնավորապես՝ լոնգրիդը,

մուլտիմեդիային հատուկ նախագիծը), որոնք որոշ հետազոտողների կողմից որակվում են որպես ժանրեր:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (Ռուսաստանյան և հայաստանյան մուլտիմեդիային լրագրության մեջ լրագրողական նյութի «տարածման նոր միջոցների» օգտագործումը) վերլուծության են ենթարկվում հետազոտության արդյունքում ստացված էմպիրիկ տվյալները, որոնք բացահայտում են հայաստանյան և ռուսաստանյան ՁԼՄ-ների՝ համացանցում (սոցիալական ցանցերում, սթրիմինգային ծառայություններում, մեսենջերներում) ներգրավվածությունը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹԵՄԱՏԻԿ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երրորդ գլխի առաջին ենթագլխում (Հայաստանյան ժամանակակից մուլտիմեդիային դաշտը և հայ հրապարակախոսության ավանդույթների յուրահատկությունները) ներկայացվում են հայ հրապարակախոսության մեջ բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման կոնկրետ օրինակներ, շեշտադրվում է արդիական խնդիրների լուծման գործընթացում պատմական փորձի և ազգային-մշակութային հարուստ ժառանգության օգտագործման անհրաժեշտությունը:

Նույն գլխի երկրորդ ենթագլխում (Հայաստանյան մուլտիմեդիային դաշտը և ազգային ինքնության հարցերը) վերլուծվում են որոշ վիճահարույց թեմաներ (կրթության, ազգային ինքնության, իմիջիոլոգիական հիմնահարցեր)՝ ժամանակակից ՁԼՄ-ների դրանց լուսաբանման համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ատենախոսությունը՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Համացանցայնացման և թվայնացման գործընթացները, որոնք անհրաժեշտ են «համացանցային լրագրության» ու «թվային լրագրության» ձևավորման համար, ինչպես նաև կոնվերգենցիայի գործընթացները, որոնք անհրաժեշտ են «կոնվերգենտ լրագրության» գոյության համար պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են ստեղծում «մուլտիմեդիային լրագրության» կայացման արձանագրման համար, քանզի վերջինս (որպես լրագրողական գործունեության ոլորտ) ի հայտ է գալիս գեթ նոր ժանրաձևաչափային

լուծումների կիրառմամբ: Համապատասխան եզրույթների ճշգրտմամբ ու համադրմամբ է պայմանավորված այն եզրակացությունը, որ մուլտիմեդիային դաշտի ձևավորման համար որպես անհրաժեշտ գործոններ առանձնանում են համացանցայնացումը, բարձր տեխնոլոգիաների օգտագործումը՝ նպատակաուղղված մեկ «կրիչում» բազմահարթակ (տեքստային, ձայնային, վիզուալ՝ լուսանկար, անիմացիա, գրաֆիկա, տեսաձայնային) տեղեկատվական «կոնտենտի» համաժամանակյա տարածման ու պահպանման ապահովմանը, «ինտերակտիվությունը» (տեղեկատվության ստացողի ներգրավածությունը և նրա հետ փոխգործակցությունը տեղեկատվական և հաղորդակցման գործընթացում), լրագրողի գործունեության նոր ձևերի ու մեթոդների ստեղծագործական սինթեզը (ի տարբերություն կոնվերգենտ լրագրությանը բնորոշ հաղորդակցության տարածման տարբեր միջոցների մեխանիկական միահյուսման): Մուլտիմեդիային լրագրությունն ի հայտ է գալիս այն պահից, երբ անցում է կատարվում տեղեկատվության տարածման առկա ձևերի մեխանիկական միավորումից («էկլեկտիկայից») դեպի լրագրողական հանրության աշխատանքի «սինթեզված» նոր ձևերը: Անհրաժեշտ է նաև ԶԼՄ-ների կողմից բլոգոսֆերայի (մասնավորապես սեփական լսարան «նվաճելու» համար) սոցիալական ցանցերի (Facebook, Twitter, Instagram, ВКонтакте, Одноклассники) և մեսենջերների կիրառումը:

2. Հետխորհրդային տարածքում մասնավոր հրատարակիչների ի հայտ գալը գերակայող է դարձրել ԶԼՄ-ների ֆինանսավորման գործոնը (մեծամասամբ այդ ֆինանսավորումը իրականացվում է գովազդ պատվիրողների կողմից), ինչն էլ բացառիկ տեղ է հատկացրել գովազդային գործառույթին ժամանակակից հայաստանյան և ռուսաստանյան լրագրության մեջ: Վերոգրյալը պայմանավորել է այն իրողությունը, որ շուկայական տնտեսության պայմաններում տեղեկատվությունը ևս դարձել է յուրօրինակ «ապրանք», ժամանակակից ԶԼՄ-ները մեծ ուշադրություն են դարձնում արտակարգ իրադարձություններին, քրեական պատմություններին, սկանդալային նյութերին, պոպ-արվեստի ներկայացուցիչների անձնական կյանքի պատմություններին, քանզի նման տեղեկատվությունը պահանջարկված է լսարանի կողմից: Մշակութային-կրթական և արժեքային կողմնորոշիչ գործառույթները (որոնք խորհրդային լրագրության մեջ տեղեկատվական գործառույթից անքակտելի են եղել) այսօր փաստորեն զիջում են իրենց տեղը բարձր վարկանիշի հետևից ԶԼՄ-ների մրցավազքին: Նման միտումները որակապես ձևափոխում են լրագրության «ռեկրեատիվ» և «ռելաքսացիայի» (ժամանցային) գործառույթները: Մուլտիմեդիային լրագրության ժամանակակից հարացույցում տեղեկատվական գործառույթը

հաճախ փոխկապակցված է ժամանցային գործառույթին, ինչով էլ բացատրվում է «ինֆոթեյնմենթ» երևույթի ձևավորումը:

3. Ելնելով ժամանակակից մուլտիմեդիային նյութերի վերլուծությունից և այն փաստի առձանագրումից, որ տեքստը կարող է օրգանապես լրացվել ձայնագրություններով, տեսանյութերով և ինտերակտիվ բնույթի այլ բովանդակությամբ՝ հանգել ենք եզրակացության, որ լրագրողական գործունեությունը հեռանում է «տեքստակենտրոնությունից» (առկա է «ի՞նչ» հարցից դեպի «ի՞նչպես» հարցը շեշտադրումների տեղաշարժ), և կարևորվում է ոչ թե տեղեկատվական «բուն նյութը», այլ նրա «փաթեթավորման» ձևը: Ցանկացած նյութի՝ համացանցում ակնթարթորեն հայտնվելու և ընդամեը մի քանի րոպե անց «հնանալու» հնարավորությունը պայմանավորում է ժամանակակից լրագրության մեջ նյութի բացառիկության հանդեպ հետաքրքրության որոշակի անկումը:

4. Ժամանակակից լրագրության գործառութային փոխակերպումների (նյութի «սպառողի» և «արտադրողի» փոխհարաբերությունների տեսանկյունից) ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել եզրակացության, որ մուլտիմեդիային լրագրությանը բնորոշ «ինտերակտիվության» կարգը ազդում է թե՛ նյութի ընտրության (տեղեկատվության տարածման գործընթացի մեջ լսարանի ներգրավածության), թե՛ նութի լիարժեքության (տեղեկատվության սպառողը դառնում է նաև համահեղինակ) վրա, իսկ «ունիվերսալ լրագրողի» գործունեությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ լրագրողը ստիպված է միաժամանակ «կոնտենտ» ստեղծել տարբեր մեդիահարթություններում (տեքստային, ձայնային և տեսաձայնային)՝ հաճախ միևնույն հարթակում զուգահեռաբար օգտագործելով տեղեկատվության տարածման տարբեր միջոցներ:

5. Չնայած տարբեր ժանրերի բնորոշման կամ ժանրաստեղծ հատկանիշների հարցում առկա մեթոդաբանական տարաձայնություններին ու տարընթերցումներին՝ ակնհայտ է, որ լրագրության տեսության մեջ հրամայական է դառնում ժանրաստեղծ գործընթացների նոր փուլի վերաիմաստավորումը: Լրագրության մեջ ձևաչափը (ի տարբերություն ժանրի, որտեղ բովանդակությունը նույնպես հանդիսանում է որոշիչ գործոն) կարելի է բնորոշել որպես կառուցվածքային հատկանիշներով բնորոշվող երևույթ, որտեղ կարող են գոյակցել տարբեր ժանրերի տարրեր:

6. Հաշվի առնելով լոնգրիդի ստեղծման կառուցվածքային առանձնահատկությունները, մասնավորապես մուլտիմեդիային բաղադրատարրերը (լուսանկարներ, ֆոտո-պատկերասրահներ, ձայնային

ուղեկցում, ձայնագրություններ, տեսանյութեր, սլայդ-շոու, ինֆոգրաֆիկա, 360 աստիճան շրջապտույտի արտացոլմամբ համայնապատկերներ, ինտերակտիվ գրաֆիկա, քարտեզներ, «պարալաքսի էֆեկտ» և այլն) և տեքստը (որին կարող են բնորոշ լինել թե՛ գեղարվեստական-հրապարակախոսական, թե՛ ռեպորտաժի, լրագրողական հետաքննության և այլ ժանրերի տարրեր)՝ կարելի է սահմանել լոնգրիդը որպես մուլտիմեդիային լրագրությանը բնորոշ յուրօրինակ ունիվերսալ ձևաչափ:

7. Չնայած բլոգի իրողության և ավանդական լրագրության փոխհարաբերությունների մասին գիտական գրականության մեջ առկա տարաձայնություններին՝ ակնհայտ է որ բլոգն ընկալվում է որպես տեղեկատվության տարածման ու հաղորդակցման նոր միջոց, որի էական հատկանիշներից են հետադարձ կապի բարձր ցուցիչը, փոխանցվող տեղեկատվության յուրահատուկ բնույթը և բարձր արագությունը:

8. Մշտադիտարկման ենթարկված ռուսաստանյան առաջատար տպագիր ՁԼՄ-ների կոնվերգենտ մոդելի մասին թույլ է տալիս դատողություններ անել նրանց կողմից YouTube-ի օգտագործումը (բացառություն է «Ведомости» թերթը), ինչպես նաև աուդիալ ձևաչափերի կիրառումը «Коммерсантъ», «Комсомольская правда», «Новая газета» թերթերի կողմից, մինչդեռ մուլտիմեդիային նյութերի հրապարակումը բնորոշ է «Коммерсантъ», «Комсомольская правда», «Новая газета», «Аргументы и факты» և «Известия» հրատարակությունների գործունեությանը: Վերլուծելով համացանցային տարածքում ռուսաստանյան առաջատար տպագիր մամուլի ներգրավվածության թվային ցուցանիշները՝ ակներև է դառնում, որ տվյալ ՁԼՄ-ների նյութերի առցանց առաջխաղացման համար նվազ արդյունավետ է եղել Instagram սոցիալական կայքը, ինչը մեր կարծիքով օբյեկտիվ է, քանզի սույն հարթակը ենթադրում է «պատկերային» ուղեկցմամբ, այլ ոչ թե զուտ տեքստային նյութի ներկայացում: Facebook, Twitter, ВКонтакте սոցիալական ցանցերը ունեցել են մոտավորապես հավասարազոր արդյունավետություն արտացոլող ցուցանիշներ: Վերոհիշյալ ՁԼՄ-ներից սոցիալական կայքերում նվազ չափով ներկայացված են եղել «Московский комсомолец» և «Парламентская газета» թերթերը, իսկ «Комсомольская правда» և «Ведомости» թերթերն ունեցել են առավել մեծ ներկայացվածություն:

9. Տեղեկատվության տարածման համար հայաստանյան մամուլի շրջանակում նվազ տարածում ունեն Twitter (օգտագործվում է միայն «Առավոտ», «Ժողովուրդ» և «Республика Армения» պարբերականների կողմից) և Instagram հարթակները: Յութուբյան ալիքները թույլ են տալիս օգտագործել համացանցային հեռուստատեսության հնարավորությունները, ինչն էլ վկայում

է տվյալ ոլորտում կոնվերգենտության հասնելու փորձերի մասին: Ամենամասսայական հարթակն է Facebook սոցիալական ցանցը: Telegram մեսենջերը աստիճանաբար դառնում է մասսայական (այս մասին է վկայում մեր իրականացրած մշտադիտարկման ժամանակահատվածում բաժանորդների թվի աճը): Տեղեկատվական տարածման արդիական հարթակները ակտիվորեն օգտագործվում են «Ժողովուրդ», «Առավոտ» և «Հրապարակ» թերթերի կողմից, նվազ ակտիվություն են դրսևորում «Իրատես», «Ազգ» և «Новое время» պարբերականները: ՁԼՄ-ների կոնվերգենցիայի և մուլտիմեդիականացման գործընթացների համատեքստում հարկ է նաև նշել «Հայաստանի Հանրապետության» և «Республика Армениа»-ի խմբագրությունների գործունեությունը՝ հաշվի առնելով վերջիններիս կառուցվածքային փոխկապակցվածությունը «Արմենպրես» գործակալության հետ:

10. Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցները, որոնք ստեղծման օրից գործում են համացանցային տարածքում (ինչն էլ օբյեկտիվորեն պայմանավորել է նրանց աշխատանքի կոնվերգենտ բնույթը) առավել չափով են ներգրաված մուլտիմեդիականացման գործընթացներում, քան «ավանդական» լրագրության ներկայացուցիչները, սակայն կարելի է բացահայտել այնպիսի ՁԼՄ-ների զարգացման վեկտորը, ինչպիսին են «Արմենպրես» տեղեկատվական գործակալությունը, «Մեդիամաքս» մեդիա-հոլդինգը, «Հայաստանի Հանրային ռադիոն», «Սպուտնիկ Արմենիա» և «Ազատություն» ռադիոկայանները, «Շանթ» հեռուստաընկերությունը՝ «մուլտիմեդիականության սիներգիայի» դրսևորմամբ:

11. Կարելի է արձանագրել, որ այսօր տեղին է խոսել ռուսաստանյան մուլտիմեդիային դաշտի և կոնվերգենտ լրագրության (դասական իմաստով) զարգացման նոր փուլի, ինչպես նաև հայաստանյան իրականության մեջ կայացման միտումների ու համացանցային կայքերը ստեղծագործական նպատակներին ծառայեցնելու՝ հայ լրագրողների ձգտումների մասին (ինչը կարելի է բնորոշել որպես պայմանականորեն «ներքին կոնվերգենցիա» կամ էլ «մասնակի-ֆրագմենտար մուլտիմեդիականացմանը» նպատակաուղղված համապատասխան փորձեր):

12. Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում «գիտական լրագրության» ու «կրթության ոլորտի լրագրության» զարգացման համատեքստում ևս հարկ է նշել մուլտիմեդիային մոդելի կիրառմամբ, տեղեկատվության տարածման տարբեր ալիքների համաժամանակյա և նոր «հիբրիդային» մեդիայի օգտագործմամբ ընձեռվող այն հնարավորությունների

մասին, որոնք կարող են նպաստել գործընթացում հետաքրքրված անձանց առավել լայն շրջանակի ներգրավմանը, քանզի տեղեկատվության տարածման յուրաքանչյուր ալիք «համահունչ է» լսարանի համապատասխան պահանջներին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով համապատասխան նյութի վերլուծությունից և ատենախոսության եզրակացություններից՝ առաջարկվում է.

1. Հայաստանյան ԶԼՄ-ների խմբագիրների և աշխատակիցների հետ համագործակցաբար մշակել ծրագրեր, որոնք թույլ կտան օգտագործել մուլտիմեդիային լրագրության հնարավորությունները ազգային ինքնության սուր բանավիճային (մասնավորապես՝ գիտության և կրթության, արվեստի պատմության, կրոնական հանդուրժողականության ու փիլիսոփայական ժառանգության) հիմնահարցերի առավել արդյունավետ լուսաբանման համար: Հատուկ արդիականություն է ստանում ազգային արժեքների պահպանությանը նպատակաուղղված լրագրողական համապատասխան դպրոցների ձևավորումը:

2. Հայաստանի Հանրապետության բուհերում ուսումնասիրելով առկա հնարավորությունները՝ ներմուծել «Լրագրություն» մասնագիտացմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար հատուկ կուրսեր («Մուլտիմեդիային և կոնվերգենտ լրագրությունը Հայաստանում», «Ժանրաձևաչափային լուծումները մուլտիմեդիային լրագրությունում», «Մուլտիմեդիային լրագրության կառավարման հիմնահարցերը Հայաստանում», «Հրապարակախոսության ավանդույթների օգտագործումը մուլտիմեդիային լրագրության մեջ»), ստեղծել համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներ: ԶԼՄ-ների կոնվերգենցիայի և մուլտիմեդիականացման գործընթացների համատեքստում պետք է հատուկ ուշադրություն դարձնել նաև հետխորհրդային երկրներում մեդիա կրթության աշխատանքներին, դաշտի իրավական կարգավորման կատարելագործմանը:

3. Հայաստանի Հանրապետությունում ներդնել «կրթության ոլորտի լրագրության» գործիքակազմի օգտագործման մեխանիզմները (հաշվի առնելով նաև արտասահմանյան, այդ թվում ռուսաստանյան ու չինական փորձը), ինչը կարող է նպաստել մեր երկրի գիտակրթական համակարգի, ինչպես նաև «գիտական լրագրության» ֆենոմենի հետագա զարգացմանը:

4. Օգտագործել հետխորհրդային երկրներում ձևավորված հրապարակախոսության ավանդույթները նոր ժանրաձևաչափային

լուծումների փնտրտուքի և «կոնկրետ» (էկոլոգիական, գիտակրթական կամ այլ) ուղղվածության նյութի ստեղծման գործընթացում:

5. Լրագրողական նյութի «դիջիթալիզացիայի» արտերկրի փորձը կարևորելով՝ իրականացնել հայաստանյան տարբեր ՁԼՄ-ների և տարբեր արխիվների՝ հայ լրագրության պատմության համար արժեքավոր նյութերի թվայնացումը՝ նպատակաուղղելով գիտական լրագրության զարգացմանը, գիտահանրամատչելի հաղորդումների պատրաստմանը, ազգային-մշակութային ինքնության հիմնահարցերի պրոպագանդմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Սաֆարյան Ա., Հայ հրապարակախոսության ավանդույթների դերը՝ մուլտիմեդիային հարթակներում բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման գործընթացում // Պատմություն և մշակույթ (Հայագիտական հանդես), 2020, N 2, Երևան, էջ 161-165:

2. Սաֆարյան Ա., Լրագրության ժանրաձևաչափային դասակարգման առանձնահատկությունները մուլտիմեդիային տրանսֆորմացիաների դարաշրջանում // Գրականագիտական հանդես, 2021, N 2, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, էջ 225-236:

3. Сафарян А. А., О некоторых особенностях конвергентной и мультимедийной журналистики в Республики Армения // История и культура (Арменоведческий журнал), ЕГУ, Ереван, 2021, 2, стр. 114-118.

4. Сафарян А. А., Об отражении проблем образовательных систем стран ЕАЭС и Китая в СМИ и мультимедийном пространстве: реалии и перспективы // Вопросы востоковедения, ЕГУ, Ереван, 2021, н. 19, стр. 165-174.

5. Сафарян А. А., О жанрово-форматных подходах в процессе определения феномена “мультимедийной журналистики” // Вестник Ереванского университета: Филология, том 13, 1 (37), Ереван, 2022, стр. 94-101.

6. Сафарян А. А., Возникновение и становление мультимедийных площадок и конвергентной журналистики Республики Армения и Российской Федерации // Вестник арменоведения, Международный арменоведческий журнал, 2022, N 1 (28), Ереван, стр. 165-176.

7. Алекян М. В., Сафарян А. А., О ключевых тенденциях мультимедизации и использовании армянскими СМИ новых форматов // Актуальные проблемы

медиапространства: от теоретических аспектов до практической реализации, Москва, РУДН, 2022, стр. 35-49.

8. Оганесян С.Г., Сафарян А.А., О конвергенции в формах духовной культуры: вопросы “философского киноискусства” и осмысление проявлений конвергенции в СМИ // Вестник общественных наук, 2022, N 1, Ереван, стр. 288-303.

9. Оганесян С.Г., Сафарян А.А., Об особенностях изложения философских идей в художественной форме // Вестник общественных наук, 2 (653), Ереван, 2018, стр. 142-149.

10. Сафарян А.А., О некоторых проблемах ценностных ориентиров научно-образовательных систем стран ЕАЭС и СНГ // 21-ый век, информационно-аналитический журнал, 4 (49), Ереван, 2018, стр. 19-27.

11. Сафарян А.А., Образ честного делового человека – армянина в классических памятниках европейской культуры эпохи Просвещения // Вопросы востоковедения, N 13, Ереван, 2017, стр. 408-415.

12. Сафарян А.А., Некоторые страницы изучения и пропаганды армянской философской мысли в СССР // История и культура (Арменоведческий журнал), ЕГУ, Ереван, 2018, стр. 306-311.

САФАРЯН АРМАН

ТЕНДЕНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СОВРЕМЕННЫХ МУЛЬТИМЕДИЙНЫХ ПЛОЩАДОК (НА ПРИМЕРЕ СМИ РА И РФ)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06 – «Журналистика».

Защита диссертации состоится 6 июля 2022 г. в 12:00 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 012 ВАК по литературоведению.

Адрес: г. Ереван, 0025, ул. Абовяна 52а, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 202.

Резюме

В научной литературе акцентируется возникновение новых форм журналистской деятельности в связи с использованием интернета как площадки распространения информации. Процессы интернетизации и конвергенции способствовали становлению мультимедийной журналистики. Данная работа, посвященная проблематике выявления тенденций и перспектив развития мультимедийных площадок (на примерах российских и армянских СМИ), является одним из первых научных опытов – комплексным исследованием данной области в армянской действительности. Теоретические проблемы становления мультимедийной журналистики являются малоизученными также для российской и западной действительности, и данная констатация также свидетельствует об актуальности данной работы.

Цель работы заключается в комплексном изучении феномена мультимедийной журналистики, раскрытии тенденций современной журналистики и выявлении специфических возможностей мультимедийных площадок для развития, продвижения журналистской продукции и повышения конкурентоспособности армянских СМИ. Были поставлены следующие задачи: разграничить объемы понятий “интернет журналистика”, “онлайн журналистика”, “конвергентная журналистика” и “мультимедийная журналистика”; выявить исторические прототипы “конвергентной” и “мультимедийной” журналистики (в армянских и российских реалиях); обозначить функциональные трансформации журналистики и изменения в практической деятельности журналиста в связи с процессами конвергенции, интернетизации и мультимедизации информационного пространства; выявить взаимоотношение понятий жанр и формат (в контексте новых феноменов журналистского творчества); выявить показатели вовлеченности армянских и российских СМИ в интернет пространстве (как наличие сайтов, так и представленность в социальных сетях, стриминговых сервисах и мессенджерах); обозначить возможные тенденции использования мультимедийного пространства и инструментария конвергентной журналистики для освещения остродисскусионных тем на постсоветском пространстве; выявить возможности использования в мультимедийном пространстве традиций публицистики, с учетом ее исторической

роли в процессе формирования мировоззрения и “повесток” в общественном сознании.

Работа является одним из первых опытов в армянской действительности рассмотрения проблематики мультимедийной и конвергентной журналистики, становления и перспектив развития мультимедийных площадок и их роли в процессах достижения конкурентоспособности СМИ. Учитывая исторические взаимосвязи и современные условия развития российских и армянских СМИ, в работе параллельно рассматриваются и анализируются примеры, обобщается опыт становления мультимедийной и конвергентной журналистики в РФ и РА, теоретически переосмысливается понятийный аппарат мультимедийной и конвергентной журналистики, применяется междисциплинарный подход к изучению вышеназванной проблематики. Выявляются возможности отображения в мультимедийном пространстве вопросов проблем образовательных систем стран ЕАЭС и СНГ, национальной идентичности и экологии. Работа может способствовать выработке рекомендаций по оценке деятельности армянских и российских СМИ, повышению их конкурентоспособности, разработке учебно-методических пособий и составлению соответствующих программ для вузов (по спецкурсам – “Мультимедийная и конвергентная журналистика в Армении”, “Жанрово-форматные решения в мультимедийной журналистике”, “Вопросы менеджмента мультимедийной журналистики в Армении”).

Работа состоит из введения, трех глав, шести параграфов, выводов и предложений, приложений и списка использованной литературы. В первом параграфе первой главы рассматриваются этапы формирования и исторические прототипы мультимедийной журналистики в РА и РФ. Во втором параграфе первой главы рассматриваются функциональные изменения в журналистике и изменения в практической деятельности журналиста. В первом параграфе второй главы представлен краткий обзор подходов жанровой классификации традиционных журналистских материалов, для последующего выявления типологии мультимедийных феноменов, рассматриваются форматы мультимедийной журналистики, представляемые некоторыми исследователями как жанры. Во втором параграфе второй главы проводится анализ эмпирических данных исследования вовлеченности армянских и российских СМИ в интернет пространстве. В первом параграфе третьей главы приводятся примеры освещения экологической проблематики в армянской публицистике (с целью использования исторического опыта для решения задач современности). Во втором параграфе третьей главы рассматриваются проблемы образования, национальной идентичности, имиджиологические вопросы (в контексте их освещения современными СМИ). В заключении представлены выводы и предложения проведенного исследования, которые могут послужить освещению актуальных социокультурных проблем в СМИ РА и РФ с использованием инструментария конвергентной и мультимедийной журналистики.

Arman Safaryan

TRENDS AND THE DEVELOPMENT PROSPECTS OF MODERN MULTIMEDIA PLATFORMS (ON THE EXAMPLE OF THE MEDIA OF THE RA AND THE RF)

Dissertation for the academic degree of Candidate of Philological Sciences in specialty 10.01.06 – «Journalism».

Defence day: 06.07.2022 at 12:00 pm at the session of the SCC Specialized Council (Supreme Certifying Committee) 012 at Yerevan State University.

Address: Republic of Armenia, Yerevan, Abovyan str. 52/A, YSU, Faculty of Armenian Philology, room № 202.

SUMMARY

The theoretical literature focuses on the emergence of new forms of journalism in connection with the use of the Internet as a platform for disseminating information. The processes of internetization and convergence contributed to the development of multimedia journalism. This work, dedicated to the problem of identifying trends and prospects for the development of multimedia platforms (based on the examples of Russian and Armenian media), is one of the first scientific attempts - a comprehensive study of this area in Armenian reality. Furthermore, the theoretical problems of the formation of multimedia journalism are poorly studied in Russian and Western reality, and this statement also indicates the relevance of this work.

The work aims to comprehensively study the phenomenon of multimedia journalism, reveal the trends of modern journalism and identify the specific capabilities of multimedia platforms for the development and promotion of journalistic products and increasing the competitiveness of the Armenian media. The following tasks were set: to distinguish between the scope of the concepts "Internet journalism", "online journalism", "convergent journalism" and "multimedia journalism"; identify historical prototypes of "convergent" and "multimedia" journalism (in Armenian and Russian realities); designate the functional transformations of journalism and changes in the practical activities of a journalist in connection with the processes of convergence, internetization and multimediazation of the information space; identify the relationship between the concepts of genre and format (in the context of new phenomena of journalistic creativity); identify indicators of the involvement of Armenian and Russian media in the Internet space (the presence of websites and representation in social networks, streaming services and instant messengers); identify possible trends in the use of multimedia space and tools of convergent journalism to cover controversial topics in the post-Soviet space; to identify the possibilities of using the traditions of journalism in the multimedia space, taking into account their historical role in the process of shaping the worldview and "agenda" in the public mind.

The work is one of the first attempts in Armenian reality to consider the problems of multimedia and convergent journalism, the formation and development prospects of multimedia platforms and their role in the processes of achieving the competitiveness of the media. Taking into account the historical interrelations and contemporary conditions for the development of Russian and Armenian media, the paper simultaneously considers and analyzes these examples, generalizes the experience of the development of multimedia and convergent journalism in the Russian Federation and the Republic of Armenia, theoretically rethinks the conceptual instruments of multimedia and convergent journalism, applies an interdisciplinary approach to the study of the above-mentioned problems. The paper discusses the options of displaying the issues of educational systems, national identity and also ecology of the EAEU and CIS countries in the multimedia space. The work can contribute to the development of recommendations for evaluating the activities of the Armenian and Russian media, increasing their competitiveness, developing teaching aids and compiling appropriate programs for universities (for special courses - "Multimedia and convergent journalism in Armenia", "Genre-format solutions in multimedia journalism", "Issues of management of multimedia journalism in Armenia").

The work consists of an introduction, three chapters, six paragraphs, conclusions and suggestions, applications and a list of references. The first paragraph of the first chapter discusses the stages of formation and historical prototypes of multimedia journalism in the Republic of Armenia and the Russian Federation. The second paragraph of the first chapter discusses functional changes in journalism and changes in the practical activities of a journalist. The first paragraph of the second chapter provides a brief overview of the approaches to the genre classification of traditional journalistic materials; for the subsequent identification of the typology of multimedia phenomena. Some of the above mentioned formats of multimedia journalism can be presented by researchers also as genres. The second paragraph of the second chapter analyzes the empirical data of the study of the involvement of Armenian and Russian media in the Internet space. The first paragraph of the third chapter provides examples of the coverage of environmental issues in Armenian journalism (with the aim of using historical experience to solve problems of the present). In the second paragraph of the third chapter, the problems of education, national identity, imageological issues (in the context of their coverage by modern media) are considered. In conclusion, the results and proposals of the study are presented, which come to highlight the current socio-cultural issues in the media of the Republic of Armenia and the Russian Federation applying the tools of convergent and multimedia journalism.